

ՀՏԴ 728.1

ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

Կ.Ռ. Ազատյան,
Ա.Ռ. Ենգոյան,
Կ.Ռ. Խանոյան

**ԵՐԵՎԱՆՈՒՄ ԲՆԱԿԵԼԻ ՇԵՆՔԵՐԻ ՏԻՊԱՅԻՆ ՆԱԽԱԳԾՄԱՆ ՄԵԹՈՂԻ
ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՈՒՄՆ ՈՒ ԲԼՈԿ-ՄԵԿՅԻՈՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՆԵՐԴՐՈՒՄԸ
1970-ԱԿԱՆՆԵՐԻՆ**

*Քննարկվում են 1970-ականներին ք.Երևանում բնակելի շենքերի տիպային նախագծման մեթոդաբանության կատարելագործման խնդիրները: Բնակելի ճարտարապետության ոլորտում բլոկ-սեկցիոն համակարգի ներդրումը զգալի առաջընթաց էր կառուցապատման քաղաքաշինական-հորինվածքային և բնակելի շենքերի ճարտարապետահատակագծային լուծումների բարելավման տեսանկյունից: Այդ գործընթացի ճարտարապետական կազմավորման յուրահատկությունների բացահայտմանն էլ նվիրված է սույն աշխատությունը: **Առանցքային բառեր.** բնակելի, տիպային, բլոկ-սեկցիա, կառուցապատում, հատակագծային, ճարտարապետական, քաղաքաշինական, առաջընթաց*

Տիպային նախագծման գործընթացի զարգացումը: 1970-ականները ք. Երևանում բնորոշվում են զանգվածային բնակելի շինարարության բուռն զարգացմամբ: Բնակելի ճարտարապետության ոլորտում նկատելի են դառնում տիպային նախագծման մեթոդաբանության կատարելագործման միտումներն ու արդյունաբերական շինարարությամբ իրականացվող բարձրահարկ բնակելի շենքերի զարգացումը: 1960-ականների փորձից ակնհայտ էր դարձել, որ բնակելի շենքի ճարտարապետության և ընդհանուր կառուցապատման ծավալատարածական հորինվածքի ձևագոյացման գործընթացներն անմիջականորեն կապված են միմյանց հետ: Եվ եթե տիպայնացման տարրեր են հանդիսանում հորինվածքային բազմազանությունից և միմյանց հանդեպ տարածական տարրեր համադրությունների մեջ մտնելու հնարավորությունից զուրկ ավարտուն կառուցվածքի շենքերը, ապա արտահայտիչ կառուցապատմամբ համալիրների ձևավորումն անհնար է: Ելնելով դրանից՝ սերիաներում, նախագծերի տեսակների ավելացմանը զուգահեռ, մշակվում է նաև տիպային նախագծման նոր մեթոդաբանություն: Ներդրվում է բնակելի կառուցվածքի ավելի մանր տարրերի տիպայնացման սկզբունքը, հիմնված բլոկ-սեկցիոն համակարգի վրա: Այն հնարավորություն էր տալիս ավելի փոքր ելակետային տարրերի կոնստրուկտիվ բլոկացման շնորհիվ հասնել կառուցապատման առավել բազմազան լուծումների [1]:


Բլոկացման սկզբունքը կացարանի տարածական կազմավորման համակարգի հնագույն հնարքներից է: Միջազգետքի բնակավայրերում հայտնաբերված առանձին բնակարանները համակցված էին և ունեին ընդհանուր պատեր, այսինքն՝ բլոկացված էին: Բլոկացված տները

գարգացել են նաև Հունաստանի և Հռոմի քաղաքներում՝ հետագայում վերածնվելով արդեն ուշ միջնադարյան եվրոպական առևտրական քաղաքներում: Բնակելի կառուցապատման այս հնարքի արդյունավետությունը մշտապես կապվել է սահմանափակ տարածքում առավել խիտ բնակեցման և տարածության ռացիոնալ օգտագործման հնարավորություններով [2]:

Բլոկ-սեկցիոն համակարգի ներդրմամբ տիպային նախագծման մեթոդաբանության զարգացման գործընթացում նշանակալի աշխատանքներ են կատարվել ԽՍՀՄ-ի մի շարք խոշոր գիտահետազոտական կենտրոններում (ЦНИИЭП жилища, Киев ЗНИИЭП, МНИИТЭП, Ленпроект և այլն): Հայաստանում նման կենտրոնների բացակայության պարագայում այս ոլորտի հիմնական բեռն ընկել է «Հայպետնախագիծ» ինստիտուտի վրա, որն աստիճանաբար վերածվել է տիպային նախագծերի սերիաների մշակման առաջատար կազմակերպության:

Տիպային նախագծերի բլոկ-սեկցիոն համակարգով նոր սերիաները: Բլոկ-սեկցիոն համակարգի ներդրումը և շինարարակլիմայական գոտիավորման համաձայն բնակելի շենքերի տիպաբանական պահանջների ձևավորումը հիմք հանդիսացան տիպային նախագծերի նոր սերիաների մշակմանը: 1970-ականների սկզբին «Հայպետնախագիծ» ինստիտուտում IV կլիմայական ենթաշրջանի համար վերամշակվեց 1A-450 սերիան՝ ընդգրկելով համալիր կոնստրուկտիվ համակարգով, կրող երկայնական և լայնական պատերով 5-հարկանի քարե բնակելի շենքերի տիպային նախագծեր: Սերիայի հիմքում ընկած էին տարբեր երկարության գծային շենքերի ձևավորման համար նախատեսված շարքային և եզրային բլոկ-սեկցիաները: Բնակելի բջժի հատակագծման մեջ պահպանվում էր ավանդական սխեման: Ընդհանուր սենյակն ու խոհանոցն իրար կից էին և դուրս էին գալիս դեպի լոջիա, ննջարանները տեղադրված էին բնակարանի խորքում, կապված սանիտարական հանգույցի հետ: Վերջինս բաղկացած էր գուգարանից և լոգարանից, իսկ 1-սենյականոցներում՝ համատեղված էր: 3...4-սենյականոցները տեղադրված էին շարքային սեկցիայում և ապահովված էին միջանցիկ օդափոխությամբ, 1...2-սենյականոցները՝ եզրային սեկցիաներում, անկյունային օդափոխությամբ: Կցված ծածկապատշգամբներն այստեղ արդեն փոխարինվում են շենքի ծավալից դուրս եկող պատերով եզրափակված լոջիաներով: Սերիայի անվանացուցակում առկա էր նաև շրջադարձային բլոկ-սեկցիայի տարբերակը, որն սկզբունքորեն կրկնում էր շարքային սեկցիայի հատակագծային կառուցվածքը, միայն այն տարբերությամբ, որ այստեղ նախատեսված էին երկու 3-սենյականոցներ, պայմանավորված սեկցիայի անկյունային կառուցվածքով: Սերիայի մեջ ներառվում են նաև յուրաքանչյուր հարկում 4 բնակարանով մեկսեկցիոն շենքեր: Այստեղ կազմակերպված են երեք 2-սենյականոց և մեկ 3-սենյականոց բնակարաններ, ապահովված երկկողմանի կողմնորոշմամբ և անկյունային օդափոխությամբ: Բնակարաններն ունեն շենքի ծավալի մեջ ներառված խորը լոջիաներ, կցված ընդհանուր սենյակին և խոհանոցին: Բոլոր բնակարաններում նախատեսված են երկու սանհանգույցներ: Շենքի կուռ կառուցվածքի ուշագրավ հատկություններից է սանհանգույցների մեկ հատվածում

կուտակումը, որը, ամենին չնվազեցնելով կենցաղային հարմարությունները, զգալիորեն պարզեցնում է ինժեներական կոմունիկացիաներն ու դրանց շահագործումը (նկ. 1):



**Նկ. 1. 1A-450 սերիայի բնակելի շենքեր:
 Հատակագծային լուծումները և ընդհանուր տեսքը**

Այս շենքերի բնակարանների հատակագծային կառուցվածքի միասնական համակարգի ենթարկվող լուծումներն էական առաջընթաց էին նախորդ կառույցների ճարտարապետահատակագծային կազմավորման համեմատ: Սակայն քաղաքաշինական հնարավորություններն այստեղ ևս սահմանափակ էին: Մեկ ուղղությամբ խուլ պատերով բլոկ-սեկցիաները թույլ էին տալիս միայն գծային և աստիճանաձև բլոկացում: Երկու առանցքներով բլոկացումն անհնար էր, քանի որ երկայնական պատերում խուլ հատվածների հնարավորություն չկար [1]:

1970-ականների սկզբին «Հայպետնախագիծ» ինստիտուտում մշակվում և Երևանի տնաշինական կոմբինատի կողմից սկսում է թողարկվել A1-451 КП սերիայի 9-հարկանի խոշորապանել մեկսեկցիոն բնակելի շենքը, որի հատակագծային կառուցվածքի հիմքում դրվում է 1A-450 սերիայի մեկսեկցիոն շենքի բարելավված տարբերակը: Հիմնական տարբերությունն անկյուններում տեղադրված լոջիաների լուծման մեջ էր: Այստեղ լոջիաները դուրս են բերվել հիմնական ծավալից՝ նպաստելով ծավալատարածական կառուցվածքի զարգացմանն ու մեծացնելով սենյակների մակերեսը: Այստեղ ևս յուրաքանչյուր հարկում չորս բնակարան է՝

երկուական 2 և 3-սենյականոցներ: Բոլոր բնակարաններն ապահովված են անկյունային օդափոխությամբ, հատակագծումն օժտված է հստակ լուծումներով (նկ. 2):

A1-451 KII սերիայի բնակելի շենքերի ճարտարապետական կառուցվածքն աչքի է ընկնում բլոկացման հնարավորությամբ: Դրան նպաստում են հատակագծային անհամաչափությունն ու անկյունային հատվածներում տեղադրված լոջիաների կողային պատերի և դրանց շարունակության ճակատային հարթության խուլ հատվածները, որոնք մասնաշենքերի աստիճանաձև տեղաշարժման միջոցով թույլ են տալիս իրականացնել փոխադարձ բլոկացում:



Նկ. 2. A1-451 KII սերիայի բնակելի շենք: Հատակագծային լուծումները և ընդհանուր տեսքը

Այս շենքերի դրական որակներից է կոնստրուկտիվ համակարգի արդյունավետությունը: Հավաք ձևը, զանգվածների և կոշտությունների հավասարաչափ բաշխումը, պատերի և ծածկերի հուսալի կապերով ձևավորվող կոնստրուկցիայի տարածական ամբողջականությունը՝ այս ամենը կայունություն են հաղորդում կառույցին՝ միաժամանակ դիմադրելով նաև սեյսմիկ ուժերին: Վերջինիս վառ ապացույցն է 1988թ. երկրաշարժը, որի զանգվածային փլուզումների շարքում տվյալ կառույցների կրած վնասվածքներն առավել սակավ էին:

Ի տարբերություն հատակագծային-կոնստրուկտիվ լուծումների՝ սերիայի շենքերի արտաքին ճարտարապետությունը ևս չառանձնացավ յուրահատկությամբ: Հետևելով ժամանակին բնորոշ ստերեոտիպային մոտեցմանը՝ այն անկյունային հատվածներից դուրս եկող թևերով, բետոնե խուլ բազրիքներով, ճակատային պանելների եզրագծերի մետրիկ բաժանումներով խորանարդաձև անդեմ ծավալ էր: Եվ պետք է նշել, որ տարիների ընթացքում կատարված բարեփոխումները, որոնք կապված էին արտաքին պատերի պանելների երեսպատման մեջ տուֆի երանգների և նկարվածքի փոփոխությունների հետ, իրականում որևէ կերպ չէին կարող նպաստել շենքերի ճարտարապետագեղարվեստական կերպարի բարելավմանը: A1-451 KII սերիայի 9-հարկանի մեկսեկցիոն բնակելի շենքերը դարձան Երևանի կառուցապատման երկարակյացները, որոնք շուրջ երկու տասնամյակ անփոփոխ լուծումներով կիրառություն գտան քաղաքի տարբեր շրջանների բնակելի գոյացություններում:


1970-ականների միջին հատվածը բնորոշվում է սեկցիաների տիպայնացման վրա հիմնված նախագծման բլոկ-սեկցիոն համակարգի տարբեր առաջարկներով: Դրանց շրջանակներում

«Հայպետնախագիծ» ինստիտուտում IV կլիմայական շրջանի համար մշակվում է տիպային նախագծերի հերթական նոր՝ 129-րդ սերիան, որը ներառում էր խոշորապանել 9-հարկանի բնակելի շենքերը: Բնակարանների հատակագծումն այստեղ զարգացնում էր նախկինում փորձարկում անցած լուծումների սխեման (1-451 II և 1A-450 սերիաների փորձի հիման վրա): Նորամուծություն էր ընդհանուր սենյակի և խոհանոցի առջևի լոջիայի տեղաշարժը դեպի խորք՝ շենքի ծավալի մեջ: Սերիան ներառում էր 3...4-սենյականոցներով շարքային և 1...2-սենյականոցներով եզրային բլոկ-սեկցիաներ: Սերիայի քաղաքաշինական հնարավորություններն առանձնապես մեծ չէին, ինչը հատկապես կապված էր միևնույն հարկայնության համընդհանուր կիրառման սկզբունքի հետ, իսկ ճակատներին բնորոշ էր ավանդական դարձած միապաղատությունը: Հատկանշական է, որ այս խնդիրներն առաջընթաց գրանցեցին սերիայի բարելավված տարբերակում (*1980-1986թթ., ճարտ.՝ Հ. Այվազյան, Ռ. Հակոբյան*): Այն մշակված էր ոչ միայն 9, այլ նաև 4...5-հարկանի շենքերի կիրառմամբ և քաղաքաշինական, գեղարվեստական լուծումների տեսանկյունից զգալիորեն գերազանցում էր նախորդին: Շենքերի կառուցվածքում կիրառված նոր սկզբունքները հիմնվում էին հատակագծային-կոնստրուկտիվ բջիջների տիպայնացման վրա: Սերիայի անվանացուցակում ներգրավված էին շարքային, շրջադարձային, եզրային բլոկ-սեկցիաներ և «համատեղված խաչ» ձևի բլոկ-շենքեր: Բնակարանների հատակագծման մեջ կիրառված էր ամառային տարածքների կազմակերպման նոր սկզբունքը: Ակտիվ գոտուն կից պաշտոնավայրերը կազմակերպված էին որպես ընդհանուր սենյակի և խոհանոցի միջև տեղակայված ապակեպատ լոջիաներ, ինչը զգալիորեն մեծացնում էր դրանց բազմակողմանի կիրառության հնարավորությունները: Սակայն բարելավված տարբերակն այդպես էլ չմտավ գործնական շինարարություն, և 129-րդ սերիան քաղաքի կառուցապատման մեջ հանդես եկավ միայն սկզբնական՝ ճարտարապետաքաղաքաշինական որակներով զգալիորեն զիջող տարբերակով, որը մտավ Երևանի գանգվածային կառուցապատման երկարակյացների շարքը (նկ. 3) [1]:

1970-ականների միջին հատվածում բլոկ-սեկցիոն համակարգի կիրառման մեկ այլ օրինակ էր նույնպես «Հայպետնախագիծ» ինստիտուտում մշակված, 129-րդ սերիայից զգալիորեն մեծ հորինվածքային հնարավորություններ կրող 111-րդ սերիան (*ճարտ.՝ Ս. Թարխանյան, Մ. Մարտիրոսյան*): Այն ներառում էր կարկասապանելային 9-հարկանի շենքեր և անվանացուցակում ուներ շարքային, շրջադարձային, եզրային T-աձև ուրվագծի բլոկ-սեկցիաներ և կետային մեկսեկցիոն շենքեր:

111-րդ սերիայի շենքերը ներառում էին բնակարանների բավական լայն կազմ և ընտրանի: Շարքային սեկցիաներում առկա էին 3 և 4, եզրային սեկցիաներում՝ 1, 2 և 4-սենյականոցներ: Եզրային T-աձև սեկցիան նույնպես բաղկացած էր 3 և 4-սենյականոց, իսկ կետային շենքը՝ 2 և 3-սենյականոց բնակարաններից: Բնակարանների հատակագծումն ընդհանուր առմամբ հստակ էր: Որպես բացթողում կարելի է նշել T-աձև շենքի եզրային բնակարանների կառուցվածքը,

որտեղ ընդհանուր սենյակն անցումային էր ննջարանային գոտու համար, ինչը որոշակիորեն նվազեցնում էր կենցաղային հարմարությունները (նկ. 4):



Նկ. 3. 129-րդ սերիայի բնակելի շենքեր: Հատակագծային լուծումները և ընդհանուր տեսքը (բարելավված տարբերակ)



Նկ. 4. 111-րդ սերիայի բնակելի շենքեր: Հատակագծային լուծումները և ընդհանուր տեսքը

111-րդ սերիայի բլոկ-սեկցիաների ծավալահատակագծային բազմազան ուրվագծումը թույլ էր տալիս դրանց բլոկացումն իրականացնել ոչ միայն մեկ՝ զծային-աստիճանաձև հորինվածքի սկզբունքով, այլ նաև՝ երկու առանցքներով: Ճառագայթաձև եզրային բլոկ-սեկցիաներն ու անկյունային բլոկացման կիրառումը հնարավորություն էին տալիս կազմակերպել բնակելի

խմբերի կիսապարփակ տարածությունները՝ զգալիորեն մեծացնելով սերիայի քաղաքաշինական որակները: Այստեղ իհարկե պետք է նշել, որ 111-րդ սերիայի կառուցապատման առավել բազմազան հորինվածքներ (կիսապարփակ-ցանցային, ժապավենային և այլն) ձևավորելու քաղաքաշինական հնարավորությունները բարձրացնող շրջադարձային և եզրային ճառագայթաձև բլոկ-սեկցիաների ներդրումն իրականացվել է միայն 1980-ականների սկզբին [1]:

Առաջընթացն ակնհայտ էր նաև ճակատների պլաստիկ լուծումների գործընթացում, որտեղ շեշտը դրված էր ճակատային հարթությունում կոնստրուկտիվ համակարգի արտահայտման վրա: Դրանց մեկնաբանությունը՝ հորիզոնական և ուղղահայաց գծային երկաթբետոնե վրադիրների և դրանց միջև ներդիր պանելների օգտագործմամբ, կարծես կրկնում էր կարկասային կառուցվածքը: Եվ այստեղ պետք է նշել, որ ճակատային հարթությունների նման մշակումը պահանջում էր շինարարության բարձր որակ և գույնի, երանգի ու հարդարման տարբեր նյութերի կիրառում, ինչը գրեթե երբեք չէր իրականացվում պատշաճ մակարդակով՝ զգալիորեն նվազեցնելով սերիայի շենքերի ճարտարապետության գեղագիտությունը (նկ. 4):

111-րդ սերիան լայն կիրառություն ստացավ Երևանի զանգվածային բնակարանաշինության գործընթացում: Այս մշակումն իրապես արտացոլում էր ժամանակի տիպային նախագծման զարգացման ընդհանուր ուղղվածությունը և զգալի առաջխաղացում էր այդ ասպարեզում: Սակայն պետք է նկատել, որ քաղաքաշինական հնարավորությունները՝ կառուցապատման խտության և հորինվածքային իմաստներով, այնուամենայնիվ, սահմանափակ էին: Անփոփոխ հարկայնությունը թույլ չէր տալիս աշխուժացնել կառուցապատման ուրվագիծը, իսկ հիմնական բլոկ-սեկցիաների փոքր խորությունը (12 մ) հանգեցնում էր գծային խտության ոչ բարձր ցուցանիշների: Նշված խնդիրները բնորոշ էին նաև 129-րդ սերիայի շենքերին, որոնք նույնպես օժտված էին միևնույն հարկայնությամբ և բավական նեղ մասնաշենքերով [3]:

Պետք է նշել նաև, որ 111-րդ սերիայի կարկասապանելային բնակելի շենքերն էական բացթողումներ ունեին կառուցվածքային տեսանկյունից: Եվ ամենևին պատահական չէր, որ դրանք զանգվածային փլուզման ենթարկվեցին 1988թ. երկրաշարժի ժամանակ: Այստեղ հիմնական պատճառ էր դիտարկվում սյուների, հեծանների ու ծածկասալերի միացման հատվածներում ամրության և առհասարակ ընդհանուր կոնստրուկտիվ համակարգի դիմադրողականության կտրուկ անկումը, ինչը կապված էր շինարարական աշխատանքների խիստ ցածր մակարդակի հետ: Սակայն առկա էին նաև այլ կարևոր պատճառներ: Կարկասային կառուցվածքը ճկուն կոնստրուկտիվ համակարգ է, որի կիրառման կարևորագույն պայմանն է կառույցի քաշի թեթևացումը: Հենց այս դեպքում են կոնստրուկցիաներն առավել արդյունավետ աշխատում ճկման պարագայում: Սակայն 111-րդ սերիայի շենքերում համատարած կիրառվել են երկաթբետոնե ծանր կախովի պանելներ՝ կարկասային կոնստրուկցիան վերածելով կոշտ համակարգի, ինչի պարագայում կտրուկ նվազում է իներցիոն մոմենտներին հակազդող

դիմադրությունը: Եվ միանգամայն պարզ է, որ պանելների այլ՝ առավել թեթև կառուցվածքի պարագայում հնարավոր կլիներ խուսափել նման զանգվածային ավերածություններից [4]:

Ամփոփելով 1970-ականներին ք. Երևանում բնակելի շենքերի տիպային նախագծման մեթոդի կատարելագործման շրջանակներում բլոկ-սեկցիոն համակարգի զարգացման խնդիրների քննարկումը՝ կարելի է կատարել հետևյալ հիմնական եզրակացությունները:

1. 1970-ականներին բնակելի ճարտարապետության գործընթացի նոր փուլը պայմանավորվել է զանգվածային շինարարության առաջին շրջանի բացթողումների հաղթահարմանն ուղղված նոր ձևերի որոնմամբ և բնորոշվել է զարգացման դրական և բացասական միտումների հակասությամբ, որտեղ ճարտարապետական սկզբունքներն աստիճանաբար սկսել են հակազդել նախկին շրջանում գերակայություն ունեցող մեխանիկական մոտեցումներին:

2. Տիպային նախագծման մեթոդաբանության կատարելագործումը բերել է տիպայնացման տարրերի մանրացման՝ բլոկ-սեկցիոն համակարգի ներդրմանը՝ միտված տարածքների առավել ռացիոնալ օգտագործման հնարավորությունների զարգացմանն ու կառուցապատման գեղարվեստական արտահայտչականության աշխուժացմանը:

3. Քաղաքաշինական տեսանկյունից բլոկ-սեկցիոն համակարգի ակնհայտ առավելությունն էր կառուցապատման տարրերի փոխադարձ տեղադրման հնարավորությունների զարգացումը: Հորիզոնական տարբեր առանցքներով և ուղղահայաց բլոկացման ենթակա տարրերի ներդրումը նպաստել է համալիրների հորինվածքների ու խտության ցուցանիշների բարելավմանը:

4. Բլոկ-սեկցիոն համակարգով նախագծված տիպային բնակելի շենքերի հիմնական թերացումներն են՝ մասնաշենքերի անբավարար խորությունն ու տարրերի բացառապես միևնույն հարկայնությունը, որոնք խաթարել են խտության պահանջներն ու նվազեցրել սերիաների քաղաքաշինական-հորինվածքային հնարավորությունները:

5. Բլոկ-սեկցիոն համակարգի ներդրումը հանգեցրել է բնակելի շենքերի ծավալատարածական լուծումների զարգացմանը: Կառուցապատման բազմազան հորինվածքային լուծումներին ուղղված ճառագայթային, շրջադարձային, անկյունային և այլ յուրօրինակ տարրերը զարգացրել են տարածական առավել հագեցած ձևեր, որտեղ նկատելի է հորինվածքային ընդհանուր մասշտաբի խոշորացման դրական միտումը:

6. Բլոկ-սեկցիոն համակարգում զգալիորեն զարգացել են բնակելի բջջի հատակագծման լուծումները: Հատակագծային տարբեր ուրվագծով կառուցվածքները թույլ են տվել ձևավորել բնակարանների առավել լայն տեսականի, բավարարել սանիտարահիգիենիկ պահանջներն ու բարելավել կենցաղային որակներն ու հարմարությունները:

7. Բլոկ-սեկցիոն համակարգում բնակելի ճարտարապետության էական բացթողումն են հանդիսացել շենքերի գեղարվեստական լուծումները, որոնք մեծամասամբ դրսևորվել են արտահայտչականության որակի ցածր մակարդակով: Բացի տիպային նախագծմանը բնորոշ ստերեոտիպային կերպարից գեղարվեստական որակի արժեզրկմանն է նպաստել նաև շինարարության ընթացքում նախագծային լուծումների մասնակի իրականացման երևույթը:

Պետք է նշել, որ 1970-ականներին բնակելի ճարտարապետության գործընթացը ք. Երևանում էականորեն զարգացել է զանգվածային շինարարության առաջին տասնամյակի համեմատ: Կառուցապատման ձևավորման ֆունկցիոնալ, ճարտարապետաքաղաքաշինական խնդիրներն իրականացվել են ավելի բարձր մակարդակով և մասնագիտական հիմնավորմամբ: Սակայն բնակելի ճարտարապետության խնդիրներն, այնուամենայնիվ, շատ էին: Պետականության և մշակույթի վերելքի պայմաններում առավել մեծ ուշադրության էր արժանանում բացառիկ օբյեկտների շինարարությունը: Ըստ ճարտարապետ Մ. Միքայելյանի, «...հասարակական շենքերի նախագծերում ճարտարապետներն ունեին ավելի մեծ հնարավորություններ, շինարարներն էլ ավելի ուշադիր էին կառուցում դրանք: Այդ բնագավառում ստեղծագործողն ավելի հեշտ էր արտահայտում սեփական ճարտարապետական լեզուն...»: Բնակելի կառուցապատումը հետաքրքրություն էր ներկայացնում միայն բնակմակերեսի ապահովման տեսանկյունից: Փաստացի բնակելի շենքերի ճարտարապետությունը սկսում էր կորցնել որոշիչ նշանակությունը քաղաքային կերպարի ձևավորման գործընթացում [5]:

**К.Р. Азатян,
А.Р. Енгоян,
К.Р. Ханоян**

УСОВЕРШЕНСТВОВАНИЕ МЕТОДА ТИПОВОГО ПРОЕКТИРОВАНИЯ ЖИЛЫХ ЗДАНИЙ В ЕРЕВАНЕ И ВНЕДРЕНИЕ БЛОК-СЕКЦИОННОЙ СИСТЕМЫ В 1970-Х ГОДАХ

Обсуждаются задачи совершенствования методологии типового проектирования жилых зданий г.Еревана в 1970-х годах. Внедрение блок-секционной системы в области архитектуры жилища было прогрессивным явлением с точки зрения улучшения и градостроительно-композиционных решений застройки и архитектурно-планировочных решений жилых зданий. Работа посвящается выявлению особенностей архитектурного формирования этого процесса.

Ключевые слова: *жилое, типовое, блок-секция, застройка, планировочный, архитектурный, градостроительный, прогресс*

**K.R. Azatyan,
A.R. Yengoyan,
K.R. Khanoyan**

IMPROVEMENT OF THE STANDARDIZED DESIGN METHODOLOGY OF RESIDENTIAL BUILDINGS AND INTRODUCTION OF BAY SYSTEM IN YEREVAN IN 1970s

The problems of the improvement of standardized design methodology of residential buildings in Yerevan in 1970s are discussed. The introduction of bay system in the field of the housing architecture was a progressive phenomenon in terms of improvement of urban-composition solutions of the development and

architectural-planning solutions of residential buildings. Paper is dedicated to the identification of the features of architectural forming of this process.

Keywords: residential, standardized, bay, development, planning, architectural, urban, progress

Գրականություն

1. **Рашидян Г.Г.** Развитие архитектуры массового жилища Армении и задачи современного этапа. Монография. – Ереван, 1999. – 88 с.
2. **Максаи Дж., Холланд Ю.** и др. Проектирование жилых зданий: Перевод с англ. - М.: Стройиздат, 1979. - 487 с.
3. **Рашидян Г.Г.** Типовое и индивидуальное проектирование жилища в прошлом и настоящем в свете решения задач развития доступного жилища в будущем // Бюллетень строителей Армении. -1999. - N5 (спец. вып.). - С. 1-3.
4. **Рашидян Г.Г.** Выбор архитектурных решений жилых зданий в условиях повышенной сейсмичности // Бюллетень строителей Армении. - 1998. - N9 (26). - С. 18-19.
5. **Հայաստանի** ճարտարապետների տասնմեկերորդ համագումարի ցուցահանդեսի Կատալոգ / խմբ. Մ.Գ.Միքայելյան. - Երևան: ՀՀՊ և ԳԱԳՊԿ, 1985. - 96 էջ:

Աշխատանքն իրականացված է ՀՀ պետական բյուջեից գիտական և գիտատեխնիկական գործունեության բազային ֆինանսավորմամբ «ՀՀ ճարտարապետական և շինարարական համալիրների կայուն զարգացման ուղիների բացահայտում, ճշգրտում, ներդրման առաջարկությունների և հանձնարարականների մշակում՝ մշտական մոնիտորինգի կիրառմամբ» ծրագրի շրջանակներում:

Ազատյան Կարեն Ռուբենի, Ճ.թ., դոց. (ՀՀ. ք. Երևան) - ՃՇՀԱՀ, ակ. Ալ. Թամանյանի անվ. ճարտարապետության և շինարարության պրորեկտային լաբորատորիա, գ.ա., ճարտարապետական նախագծման և ճարտարապետական միջավայրի դիզայնի ամբիոն, (055)774607, karenazatyan77@gmail.com: **Ենգոյան Աննա Ռոբերտի, Ճ.թ., դոց.** (ՀՀ. ք. Երևան) - ՃՇՀԱՀ, ճարտարապետական նախագծման և ճարտարապետական միջավայրի դիզայնի ամբիոն, (094)400117, conceptproyekt@rambler.ru: **Խանոյան Կատրին Ռոբերտի** (ՀՀ. ք. Երևան) - ՃՇՀԱՀ, ճարտարապետական նախագծման և ճարտարապետական միջավայրի դիզայնի ամբիոն, դասախոս, (094)282807, katrin_arch@mail.ru: **Азатян Карен Рубенович, канд. архит., доц.** (РА, г.Ереван) - НУАСА, Проблемная лаборатория Архитектуры и строительства им. акад. Ал. Таманяна, н.с., кафедра Архитектурного проектирования и дизайна архитектурной среды, (055)774607, karenazatyan77@gmail.com. **Енгоян Анна Робертовна, канд. архит., доц.** (РА, г.Ереван) - НУАСА, кафедра Архитектурного проектирования и дизайна архитектурной среды, (094)400117, conceptproyekt@rambler.ru. **Ханоян Катрин Робертовна** (РА, г.Ереван) - НУАСА, кафедра Архитектурного проектирования и дизайна архитектурной среды, преподаватель, (094)282807, katrin_arch@mail.ru. **Azatyuan Karen Ruben, doctor of philosophy (Ph.D.) in Architecture, associate prof.** (RA, Yerevan)- NUACA, Research Laboratory of Architecture and Construction by Academician Al. Tamanyan, Scientific Researcher, the Chair of Architecture Drafting and Design of Architectural Environment. (055)774607, karenazatyan77@gmail.com. **Yengoyan Anna Robert, doctor of philosophy (Ph.D.) in Architecture, associate prof.** (RA, Yerevan) - NUACA, the Chair of Architecture Drafting and Design of Architectural Environment. (094)400117, conceptproyekt@rambler.ru. **Khanoyan Katrin Robert** (RA, Yerevan)- NUACA, the Chair of Architecture Drafting and Design of Architectural Environment, lecturer, (094)282807, katrin_arch@mail.ru.

Ներկայացվել է՝ 24.03.2014թ.

Ընդունվել է տպագրության՝ 27.03.2014թ.